

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Յաւիտեանկա՛ն կեանք: Որքա՛ն քաղցրութիւն կայ այս երկու բառերուն մէջ: Որքա՛ն սփոփանք եւ մխիթարութիւն կայ: Յաւիտեանկա՛ն կեանք: Կեանք մը՝ որ չ՛աւարտիր: Կեանք մը՝ ուր կեանքը ետուն է: Կեանք մը, ուր Սուրբ Հոգին կը ցօղէ: Կեանք մը, որ ջերմացած է մեր երկնաւոր Հօր շունչով ու պաշտպանուած անոր շուքով: Կեանք մը, ուր ուրախութիւնը անսահման է, երջանկութիւնը՝ անվերջ, խաղաղութիւնն ու սէրը՝ կատարեալ: Կեանք մը, ուր հանգչած է Աստուծոյ փառքը: Այդ կեանքը Քրիստոսով միայն կրնայ պարգեւուիլ: Այդ կեանքը, Քրիստոսի արեան ծնունդը եղող կեանքն է, Քրիստոսատո՛ւր կեանքն է, Քրիստոսակեդրո՛ն կեանքն է, Քրիստոսի՛ կեանքն է, Քրիստո՛ս է:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Ողորմէ՛, Տէ՛ր, մեր եղբայրներուն, ծնողներուն ու իմ արիւնակից մերձաւորներուս, կրօնաւորներուն ու միանձն ճգնաւորներուն, անոնց, որոնք մեզի ողորմութիւն պարգեւեցին եւ անոնք, որ յանձնարարեցին զիրենք յիշել մեր աղօթքներուն մէջ: Ողորմէ՛, Բարերա՛ր, եւ տո՛ւր իւրաքանչիւրին կարիքին համաձայն: Առատապէս բաշխէ՛ Սուրբ Հոգիիդ շնորհքները բոլոր անոնց եւ զարդարէ՛ ու միացո՛ւր Քու Աստուածութեանդ սիրոյն մէջ:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԼ, ԹԷ ԱՍՏՈՒԱԾ Ի՞ՆՉ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՄԵՆԱՅ, ԿԱՐԴԱ՛ Սաղմոս 15

ՏԷ՛Ր, ո՞վ արժանի պիտի ըլլայ տաճարիդ մէջ ըլլալու, ո՞վ արժանի պիտի ըլլայ սուրբ լերանդ վրայ բնակելու: Ան՝ որ անբիծ կեանք մը կ'ապրի արդարութիւն կը գործէ, եւ միայն ճշմարտութիւնը կը խորհի ու կը խօսի. որ չի զրպարտեր բնաւ, իր ընկերոջ չարիք չ'ընէր, եւ դրացին չի նախատեր: Ան, որ կ'արհամարհէ Աստուծոյ մերժումները, մինչ կը պատուէ աստուածավախ մարդիկը, որ յանձն կ'առնէ իր երդումը յարգելով վնաս կրել, զան թէ իր խօսքը դրժել:

Ան որ իր դրամը տոկոսով չի տար, եւ կաշառքի փոխարէն անմեղին դէմ վկայութիւն չի տար: Այսպէս ապրողը երբեք պիտի չսասանի՛:

Չար աչք ունեցողին հացը մի՛ ուտեր եւ անոր ազնիւ ուտելիքներուն մի՛ ցանկար. վասն զի անիկա իր սրտին մէջ ինչպէս կը մտածէ, այնպէս է: Առակ 23: 6-7

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak](#) [Նրազ թերթ](#)



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՍՐՔԻ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿՐԻԱԿԻ, 21 ՅՈՒՆԻՍ 2020

ԹԻԻ 25

ԿՐԻԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉՈՒԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ 1.2-15: Հո 6.12-23:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍ 12.1-8

ՔԱՐԵԿԵՆՂԱՆ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ՊԱՀՈՑ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 12.1-8

Շարաք օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր: Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տես, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը՝ որ արգիլուած է Շարաք օրով ընել»:

Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շարաք օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շարաքը եւ սակայն ատիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն ատելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք, թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ», այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շարաքին»:

Յիսուս այս անտարանին ընդմէջէն մեզի կը սորվեցնէ, թէ գործը եւ առաքելութիւնը մարդուն ատելի անհրաժեշտ են, եւ վերել յիշուած Յիսուսի վերջին խօսքը՝ ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ զոհ, ատելին կը շեշտէ մարդուն գործին անհրաժեշտութիւնը օրէնքը եւ անոր հանդէպ մեր ունեցած բծախնդրութիւնը կարելոր են, սակայն երբեմն այդ օրէնքները անհրաժեշտ են, որ գործնականացնենք մեր կեանքին մէջ:

**ՄԱՐԳԱՐԵՍԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒՆ ԳԻՐՔԵՆ
1.2-15**

Լսէ՛, ով երկինք, ահանջ դիր, ով երկիր, որովհետև Տէրը կը խօսի. «Զաւակներ ծնայ եւ մեծցուցի, բայց անոնք զիս ուրացան: Նոյնիսկ եզր զինք պահողը կը նանչնայ, էշը գիտէ իր տիրոջ մտւորը, բայց Խրայէլ իր Տէրը չի նանչնար, իմ ժողովուրդս չի հասկնար զիս»:

Ո՛վ մեղաւոր ազգ, անօրէնութեամբ լի ժողովուրդ, չար սերունդ, դո՛ւք, անօրէն զաւակներ: Լեւեցիք Տէրը, բարկացուցիք Խրայէլի Սուրբը, Օտարացա՛ք եւ կոնակ դարձուցիք:

Զի՞՞ բաւեր ձեր ստացած հարուածը, որ տակաւին կը շարունակէ՛ք ձեր մեղքերուն մէջ մնալ: Ահա հիւանդ է՛ք գլխովին եւ տրտում է՛ք սրտովին: Ոտէն մինչեւ գլուխ առողջ տեղ չէ մնացած: Վերժով, ուռեցժով ու թարախալից պալարներով ծածկուած է՛ք, որոնք կը մնան առանց սպեղանիի, ձեռքի կամ վիրակապի:

Զեր երկիրը աւերակ դարձած է, ձեր քաղաքները հրկիզուած, ձեր աչքին առջեւ օտար ազգեր կ'աւարեն, կ'աւերեն ու կը կործանեն ձեր աշխարհը:

Սիռնի դուստրը՝ Երուսաղէմը միայն մնացեր է, այն ալ պաշարուած ու լքուած, նման՝ կութէն վերջ այգիին մէջ լքուած պահապանի հիւղակին, կամ սեխաստանին մէջ թողուած մրգապահներու ծածկին:

Եթէ Երկնային Զօրքերու Տէրը մեզմէ մնացորդներ պահած չըլլար, Սողոմոն կամ Գոմորի նման կորսուած պիտի ըլլային:



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՅՈՈՍԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
6.12-23**

Այսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցընելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք դարձնելով, այլ՝ որպէս մահուանէ կեանքի եկած մարդիկ, դուք ձեզ Աստուծոյ յանձնեցէ՛ք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէ՛ք: Մեղքը ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

Ուրեմն ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ո՛չ օրէնքին, մե՞ղք գործենք: Բնա՛ւ երբեք: Լաւ գիտցէ՛ք, թէ որու ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհութի՛ւն Աստուծոյ, որ թէեւ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրտանց հնազանդեցաք ձեզի աւանդըւած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք:

**ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
ՀԱՅՈՑ ՍՐՏԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ**



Ներսէս Հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. թագաւորի օրով: Ան թագաւորին քարտուղարն էր, սակայն Փառէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք թափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պէտք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ Հայրապետի թոռը՝ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս Հայրապետին ընծայած է ՄԵԾ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սիրտին մէջ քրիստոնէական ազնիւ գագուսները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ, կը քաջալերէր իր ժողովուրդը, որ հեթանոսական սովորութեամբ մահուան առջեւ անյոյս չողբան, այլ՝ յարութեան յոյսով երկինքի արքայութեան հաւատան: Անդադար կը քաջալերէր, որ մարդիկ բարեգործութիւն կատարեն եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չճաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլխուն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց:

Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասընթացներ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ ամէն կողմ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է, որ ան դարձաւ Հայոց սրտի լուսաւորիչ:

**ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՍԻՐԵՆՔ
ՉԱՍՏՈՒԱԾ**

Մենք ինչո՞ւ կը սիրենք գԱստուած: Որովհետեւ բարեբար է եւ մենք իր բարեբարութեան կարի՞՞ք ունինք, կամ որովհետեւ ամենակարող է, եւ մենք չե՞նք կրնար իր կամքին հակառակ կենալ, կամ որովհետեւ մեր յաւիտենականութիւնը իրմէ կախեալ է անո՞ր համար պէտք է սիրենք զինք: Եթէ այս պատճառներով է, որ զինք կը սիրենք՝ կե՛ղծ է մեր սէրը: Անկեղծ սէրը՝ առանց պայմանի, անսակարկ եղող սէրն է:

**ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՀԵՏԱՊՆԳԵՍ
ՆՄԱՆԳ**

Սատանան եւ անոր կամքը ընող մարդիկ կը հետապնդեն մեր քայլերը, որպէսզի թակարդեն մեզ: Աստուած ի՛նք եւս կը հետապնդէ մեր քայլերը, բայց ո՛չ թէ թակարդելու մեզ, այլ՝ մեզ Զարին թակարդէն ազատելու: Իսկ դուն, եթէ նմանիդ քայլերը հետապնդող մըն ես, ի՞նչ նպատակով կ'ընես այդ մէկը: